ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՄԱՊՁԲ-ԲՀԱՀ-11/01

13.06 2012թ.

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմը, այսուհետև՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Փ.Կարապետյանի ,որը գործում է ՀՀ Արմավիրի մարզպետարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից և <<Միլաքս Գրուպ >> ՓԲԸ -ի դեմս գործադիր տնօրեն Ա.Տեր Պողոսյանի այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ավտոմեքենա (այսուհետև՝ Ապրանք),որը պետք է լինի չօգտագործված, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Վաճառողը Ապրանքը մատակարարում է գնորդին ք. Արմավիր Աբովյան 71 հասցեով:

1.3 Սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է սույն պայմանագրին ուժի մեջ մտնելուց մինչև 30.06. 2012թ. ներառյալ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Վաճառողի կողմից Ապրանքի մատակարարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Վաճառողի գործունեությանը.

2.1.2 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Վաճառողի կողմից մատակարարված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի թիվ հավելվածով նախատեսված պահաջներին և /կամ/ խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը և Ապրանքը չի կարող մատակարարվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ապրանքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված, տեխնիկական հատկանիշով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4Մինչև Ապրանքը Գնորդին մատակարարելը հրաժարվել սույն պայմանագրի կատարումից Վաճառողին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 3 օր առաջ տեղեկացնելով Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 ՈՒսումնասիրել և ընդունել տեխնիկական հատկանիշին համապատասխան մատակարարված Ապրանքը, իսկ մատակարարման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Վաճառողին:

2.2.2 Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժ:.

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքը.

2.3.2 Մինչև Գնորդին Ապրանքի մատակարաարելը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Գնորդին հատուցելու հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 3 օր առաջ տեղեկացնելով Գնորդին:

2.3.3 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Գնորդից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաներով ապահովել Ապրանքի մատակարարումը՝ ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Գնորդին պատճառված վնասներ:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Գնորդի կողմից սահմանված

ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացման և Գնորդին վճարել պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը:

2.4.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժ և տուգանքը:

2.4.5. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողություն և /կամ/ վերահսկողություն կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր / տեղեկություններ և տվյալներ/ կամ Վաճառողին հաղթող ճանաչելու /ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանայն սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդորում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացնող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկի, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

2.4.6. Պայմանագրի ապահովման գործողության ընթացքում, լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում, դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

3. Ապրանքի հանձնման և ընդունման կարգը

3.1 Վաճառողն Ապրանքի մատակարարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 աշխատանքային օրյա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Վաճառողի կողմից մատակարարված Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու /հաստատելու/ պահից:

4. Պայմանագրի / Ապրանքի/ գինը և վճարման կարգը

4.1. Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի ընդհանուր գինը, ներառյալ ԱԱՀ-ն, ներկայացված է սույն պայմանագրի հավելված N 2 –ում : Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 13000000 /տասներեք միլիոն /ՀՀ դրամ: Գինը ներառում է Վաճառողի կողմից սույն պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացվող բոլոր վճարները / ծախսերը/:

4.2 Գնորդը սույն պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով Ապրանքն ընդունելու դեպքում վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարում է հանձման- ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից 15 / տասնհինգ/ բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև 25.12. 2012թ.

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում մատակարարված Ապրանքի որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ չմատուցված ապրանքի գնի 0,5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանքի ձեռք բերման դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5%-ի չափով:

5.4 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.5 Սույն պայմանագրով նախատեսված Վաճառողի նկատմամբ հաշվարկված տույժերը և տուգանքները հաշվարկվում և հաշվանցում են Ապրանքի մատակարարելու արդյունքում Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգով :

5.7 Տուգանքի և տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3 Սույն պայմանագիրն չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով սույն պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն՝ 4 էջից, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1,N2 հավելվածները՝ բաղկացած 2 /երկու/ թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը: .

7.6 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Արմավիր , Աբովյան 71	«Միլաքս Գրուպ »,ՓԲԸ-ի
ՀՀ Արմավիրի մարզպետարան աշխատակազմ	ք.Արմավիր, Երևանյան փ/ա 18
Արմավիր Տ. Գ.Բ.	<<Ինեկոբանկ>>Արմավիրի մ/չ ՍՊ
Հ/Հ 900331131079	[illegible]05032200482
[illegible]04415276	[illegible]04403097
Փ.Կարապետյան	Ա.Տեր Պողոսյան
Կ.Տ (ստորագրություն)	Կ.Տ (ստորագրություն)

Հավելված 2
18.06 2012թ.կնքված
N ԱՄԱՊՁԲ ԲԸԱՀ -11/01 գնման պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. Դրամ

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը		Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2012թ.-ի պետական բյուջեից, ընդ որում											
				I եռ.			II եռ.			III եռ.			IV եռ.		
				Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
h/h	1	2	3=4:15	4		6	7	8	9	10	11	12	13	14	15
	Toyota LC Prado 2.7L Low Grade /կամ համարժեքը	5121	13000,0						13000,0	13000,0	13000,0	13000,0	13000,0	13000,0	13000,0
Ընդամենը															13000,0

ԳՆՈՐԴ

ք. Արմավիր , Աբովյան 71
ՀՀ Արմավիրի մարզպետարան աշխատակազմ
Արմավիր Տ. Գ.Բ.
ՀՎ 900331131079
ՀՎՀՀ 04415276
_____Փ.Կարապետյան
Կ.Տ (ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

«Միլաքս Գրուպ »,ՓԲԸ-ի
ք.Արմավիր , Երևանյան փ/ա 18
<<Ինկոբանկ>> Արմավիրի մ/ճ
Հ/Հ 29503220048 2
ՀՎՀՀ 04403097
_____Ա.Տեր Պողոսյան
Կ.Տ (ստորագրություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Անվանումը	Չափման միավորը	Տեխնիկական բնութագիր
	Toyota LC Prado 2.7L Low Grade /կամ համարժեքը/	հատ	163 ձիաուժ 2.7L բենզ, 4-գլան /16փական VVT-I շարժիչ
			4-աստիճան ավտոմատ փոխանցումատուփ
			5 նստատեղ /ներառյալ վարորդինը/
			Չափսերն ու քաշը՝ երկ./Լայն./բարձր.՝ 4760/1885/1890մմ
			Քաշը/առավել./ 2700կգ.
			Կոմպլեկտավորումը
			ABS /Արգելակների ապաբլոկավորման համակարգ/
			Traction control /TRC/ /քաշող անիվների հակատեղապտուտային համակարգ
			VSC+EBD+BA
			8 անվտանգության բարձիկ
			Կոնդիցիոներ
			Լրիվ էլեկտրափաթեթ /բոլոր ապակիների և հայելիների էլ. կառավարում/
			Կենտրոնական փական
			Թավշյա սրահի ձևավորում
			Ինտենսիվ բազմաֆունկցիոնալ և շարժական ղեկանիվ
			CD- Նվագարկիչ / 6բարձրախոս/ HANDS-FREE,BLUETOOTH,USB,AUX,
			Առջևի հակամշուշային լապտերներ
			Վառելիքի բաքի տարողությունը՝ 87 լիտր
			Թեթևաձույլ 265/65R17 չափսի անվադողեր
			Գույնը՝ Սև
			Տարեթիվը՝ 2012թ. չօգտագործված, առավելագույն վազքը պետք է լինի 1000կմ
	Երաշխիք		3 Տարի ԵՐԱՇԽԻՔ
	Հետերաշխիք		Հետերաշխիքային սպասարկում՝ վաճառողի մոտ գործող գներից 5% ցածր

ԳՆՈՐԴ

ք. Արմավիր , Աբովյան 71
ՀՀ Արմավիրի մարզպետարան աշխատակազմ
Արմավիր Տ. Գ.Բ.
ՀՎՀՀ 900331131079
ՀՎՀՀ 04415276
Փ.Կարապետյան
Կ.Տ (ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

«Միլաքս Գրուպ »,ՓԲԸ-ի
ք.Արմավիր , Երևանյան փ/ա 18
<<Ինեկոբանկ>> Արմավիրի մ/ճ
Հ/Հ 20503220482
ՀՎՀՀ 04403097
Ս.Տեր Պողոսյան
Կ.Տ (ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ
АДМИНИСТРАЦИИ
АРМАВИРСКОГО
МАРЗПЕТАРАНА

377760, Ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ – 71
Հեռ.. 2 – 42 - 62
Ֆաքս. / 010/ 28-06-46

377760. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 2 - 42 - 62
/ 010/28-06-46

<<18>> 06 2012թ. թիվ 02/03.1/1978-12

<<Միլաքս Գրուպ >> ՓԲԸ-ի ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա.ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր- Պողոսյան

Հայտնում ենք, որ Արմավիրի մարզպետարանի կարիքների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել ծառայողական ավտոմեքենա :

Առաջարկվում է Ձեզ վաճառել վերոհիշյալ ապրանքը:

Գնումը ֆինանսավորվելու է Արմավիրի մարզպետարանի՝ 2012 թ. պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:
<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ << ընկերություն>>-ը իրավունք ունի՝ մասնակցելու գնման ընթացակարգին:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը և գնային առաջարկը:

Միաժամանակ կից ներկայացնում ենք ապրանքի գնման պայմանագրի նախագիծը և տեխնիկական բնութագիրը:

Աշխատակազմի ղեկավար՝ ***Փ.Կարապետյան***

Կատ.՝ Ա.Պողոսյան

Հաստատում եմ՝

մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար՝ մարզպետության

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Անվանումը	Չափման միավորը	Տեխնիկական բնութագիր
	Toyota LC Prado 2.7L Low Grade /կամ համարժեքը/	հատ	163 ձիաուժ 2.7L բենզ, 4-գլան /16փական VVT-i շարժիչ
			4-աստիճան ավտոմատ փոխանցումատուփ
			5 նստատեղ /ներառյալ վարորդինը/
			Չափսերն ու քաշը՝ երկ./Լայն./բարձր.՝ 4760/1885/1890մմ
			Քաշը/առավել./ 2700կգ.
			Կոմպլեկտավորումը
			ABS /Արգելակների ապաբլոկավորման համակարգ/
			Traction control /TRC/ /քաշող անիվների հակատեղապտուտային համակարգ
			VSC+EBD+BA
			8 անվտանգության բարձիկ
			Կոնդիցիոներ
			Լրիվ էլեկտրափաթեթ /բոլոր ապակիների և հայելիների էլ. կառավարում/
			Կենտրոնական փական
			Թավշյա սրահի ձևավորում
			Ինտենսիվ բազմաֆունկցիոնալ և շարժական ղեկանիվ
			CD- Նվագարկիչ / ճբարձրախոս/ HANDS-FREE,BLUETOOTH,USB,AUX,
			Առջևի հակամշուշային լապտերներ
			Վառելիքի բաքի տարողությունը՝ 87 լիտր
			Թեթևաձույլ 265/65R17 չափսի անվադողեր
			Գույնը՝ Սև
			Տարեթիվը՝ 2012թ. չօգտագործված, առավելագույն վազքը պետք է լինի 1000կմ
	Երաշխիք		3 Տարի ԵՐԱՇԽԻՔ
	Հետերաշխիք		Հետերաշխիքային սպասարկում՝ վաճառողի մոտ գործող գներից 5% ցածր

Պատասխանատու ստորաբաժանման՝
ղեկավար՝_____ Ա.Համբարձումյան